ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (1988-1990թթ.)

Լ. Լ. ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆ

Հայ-ռուսական հարաբերությունները դարերի պատմություն ունեն: Դրանք ձևավորվել և զարգացել են միջազգային և տարածաշրջանային բարդ գործընթացների ազդեցության տակ՝ իրենց վրա կրելով ժամանակաշրջանի կնիքը: Մոտ երեքհարյուրամյա այդ հարաբերությունները լի են հիշարժան փառավոր էջերով, ինչը թույլ է տալիս խոսել հայ-ռուսական բարեկամության մասին: Սակայն չենք կարող անտեսել շատ իրադարձություններ, որոնք սև բիծ են թողել երկու ժողովուրդների հարաբերությունների վրա:

Հայ-ռուսական հարաբերությունները բազմաթիվ, այդ թվում նաև հակասական, գնահատականների են արժանացել հայ հասարակական-քաղաքական մտքի, պատմագրության և ընդհանրապես հայ ժողովրդի կողմից: Նշենք դրանցից միայն մեկը և հիմնականը, հաշվի առնելով, որ նպատակ չունենք անդրադառնալ հայ-ռուսական հարաբերությունների ողջ պատմությանը: Խոսքն այն պնդման մասին է, որ Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացումով հայ ժողովրդի մի հատվածը փրկվեց ֆիզիկական բնաջնջումից: Այս էական փաստն ընդունվում է ճնշող մեծամասնության կողմից: Ինչ վերաբերում է հայ-ռուսական հարաբերությունների մյուս կնճռոտ հարցերին, ապա պետք է ըմբռնել այն դառը ճշմարտությունը, որ քաղաքական բեմում ամեն մի պետություն հանդես է գալիս իր սեփական շահերից ելնելով, որ բարեգործությունը և գթասրտությունը քաղաքականության մեջ հետին պլանում են, եթե ընդհանրապես դրանք գործում են, և որ զգացմունքներն այստեղ տեղ չունեն, քանի որ իշխում է ճշգրիտ հաշվարկը: Ահա այս տեսանկյունից էլ փորձենք մոտենալ հայ-ռուսական հարաբերությունների նորագույն շրջանին առնչվող որոշ հարցերի:

Խորհրդային Միության պատմությունը լի է տարիմաստություններով, չլսված հանցագործություններով ժողովուրդների ու անհատ մարդկանց նկատմամբ և լրացուցիչ, բազմակողմանի ուսումնասիրության կարիք ունի: Այսուամենայնիվ, շատ բաներ արդեն հայտնի են և թույլ են տալիս որոշակի եզրակացություններ անել:

Երբեմն ԽՍՀՄ-ը համարում են ռուսական կայսրության մեկ այլ տարբերակ: Սակայն դա այդքան էլ ճիշտ չէ: Խորհրդային Միության, այսպես կոչված, կենտրոնը (ի դեմս կենտրոնական միութենական իշխանությունների) մի եզակի, պատմության մեջ նախադեպը չունեցող երևույթ էր: Դա մի ինքնուրույն քաղաքական սուբյեկտ էր, որն ուներ իր սեփական շահերը և վարում էր իր առանձին քաղաքականությունը, որը միշտ չէ, որ համապատասխանել է նույնիսկ Ռուսաստանի շահերին (օրինակ՝ Ղրիմի անջատումը Ռուսաստանից և Ուկրաինայի կազմի մեջ մտցնելը): Ուս-

սի, ճիշտ չէ կենտրոնի ցանկացած գործողություն մեխանիկորեն դիտեցնել Ռուսաստանի շահերից, թեև ԽՍՀՄ ժողովուրդները, այդ թվում հայերս, Մոսկվայի յուրաքանչյուր քայլը գնահատել ենք որպես ռուսական քաղաքականության դրսևորում: Միաժամանակ, ոչ ոք չի կարող ժխտել, որ ՌԽՖՍՀ-ն խորհրդային կայսրության «իրավահավասար» հանրապետությունների մեջ, այնուամենայնիվ, առաջինն էր, իսկ ռուս ժողովուրդը «իրավահավասար», «եղբայրական» ժողովուրդների շարքում՝ «ավագ եղբայրը»: Ահա այսպիսի բարդ գործոնների ազդեցության տակ են զարգացել հայ-ռուսական հարաբերությունները խորհրդային շրջանում, ուստի ամեն առանձին պատմական իրադարձություն պահանջում է առանձնահատուկ մոտեցում, հրաժարում քարացած սխեմաներից և գաղափարներից:

1985թ. խորհրդային երկրի ղեկավար Մ. Գորբաչովը հռչակեց վերակառուցման, դեմոկրատացման և հրապարակայնության քաղաքականություն: Խորհրդային Միության պատմության մեջ սկսվեց նոր վտալ: Նոր քաղաքականությունը հույսեր արթնացրեց ԽՍՀՄ բոլոր ժողովուրդների, այդ թվում նաև հայերի մեջ՝ կապված նախորդ շրջաններում խորհրդային պետության ղեկավարության թույլ տված սխալները և անօրինականությունները ուղղելու հետ: Որպես հետևանք՝ Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում 1988թ. ծավալվեց Ղարաբաղյան շարժումը, որի նպատակն էր վերացնել 1921թ. Ի. Ստալինի անթույլատրելի միջամտությամբ կատարված անօրինականությունն ու անարդարությունը և Լեռնային Ղարաբաղը վերամիավորել Մայր Հայաստանի հետ:

Վերակառուցման չորրորդ տարում նորից բարձրացված դարաբաղյան խնդիրը հայերի համար դառնալու էր առաջնային հարց և ազդելու էր հասարակական կյանքի մյուս բոլոր բնագավառների, այդ թվում հայ-ռուսական հարաբերությունների վրա, որոնք իրենց հերթին նոր վտալ էին թևակոխում՝ կապված Խորհրդային Միությունում ձևավորվող նոր մթնոլորտի, նոր իրավիճակի հետ:

Եվ այսպես, 1998թ. փետրվարի 20-ին ԼՂԻՄ-ի մարզխորհրդի նստաշրջանը որոշում ընդունեց դիմել Ադրբեջանական, Հայկական և ԽՍՀՄ Գերագույն խորհուրդներին (ԳԽ)՝ ԼՂԻՄ-ը Ադրբեջանի կազմից դուրս բերելու և Հայաստանի կազմի մեջ ընդգրկելու մասին: Սա միջազգային իրավական նորմերին և ԽՍՀՄ սահմանադրությանը համապատասխանող որոշում էր՝ կոչված իրագործելու ազգերի ինքնորոշման իրավունքը: Ընդհանրապես ոչ մի կայսրություն չի հարգել ազգերի ինքնորոշումը, և ԽՍՀՄ-ը բացառություն չէր: Մոսկվայի պատասխանը երկար սպասեցնել չտվեց. արդեն փետրվարի 21-ին ԽՍԿԿ կենտրոնական կոմիտեն Ղարաբաղյան հարցի արդարացի լուծմանը ձգտող ժողովրդական շարժումը որակեց որպես «ծայրահեղական», իսկ գոյություն ունեցող ազգային-տարածքային կառուցվածքի վերանայմանն ուղղված պահանջները և գործողությունները՝ «Ադրբեջանական և Հայկական ԽՍՀ աշխատավորների շահերին հակասող», ազգամիջյան հարաբերությունների համար վնասաբեր[1]: Սա դասական կայսերապաշտական մոտեցում էր՝ լրացված գաղափարախոսական ճոռոմաբանությամբ:

Կենտրոնի հաջորդ քայլերը ևս նույն ոգով էին: 1988թ. փետրվարի 26-ին Մ. Գորբաչովը հանդարտության և զսպվածության կոչով դիմեց Հայաս-

[1] Տե՛ս Правда, 25.II.1988.

տանի և Ադրբեջանի ժողովուրդներին[2]: Հայ ժողովուրդն ի սկզբանե չցանկանալով դուրս գալ սահմանադրական պայքարի շրջանակներից և հավատալով վերակառուցմանը, ըմբռնումով ընդունեց կոչը. դադարեցվեցին հանրահավաքները, ցույցերն ու գործադուլները: Իսկ Ադրբեջանի Սումգայիթ քաղաքում այդ կոչին հաջորդած երեք օրվա ընթացքում (փետրվարի 27-29) իրականացվեց հայերի ջարդ, որը ՍԱԿ-ի կողմից ընդունված սահմանմանը համապատասխան կարելի է որակել որպես ցեղասպանություն: Իր հերթին, լինելով փոքր կայսրություն՝ Ադրբեջանն արձագանքեց ոչ թե Գորբաչովի կոչին, այլ կենտրոնի վերոհիշյալ քաղաքականությանը, որը դրսևորվեց ԽՄԿԿ կենտկոմի փետրվարի 21-ի որոշման մեջ: Մոսկվան սա չտեսնելու տվեց: Կենտրոնական մամուլը, որը խոսքի, մամուլի ազատության բացակայության պայմաններում դարձել էր կայսերապաշտ քաղաքականության հզոր գործիք, համառորեն թաքցնում էր կատարվող իրադարձությունների էությունը: «Իզվեստիա» թերթը գրում էր. «Փետրվարի 28-ին Սումգայիթում խուլիգանական տարրերի մի խումբ հրահրել էր անկարգություններ: Հակաիրավական գործողությունների մեջ էին ներքաշվել անկայուն, դեռահաս մարդիկ, որոնք ընկել էին Լեռնային Ղարաբաղում և Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների շուրջը պտտվող կեղծ լուրերի ազդեցության տակ: Քրեական տարրերը կատարում էին բռնի գործողություններ և կողոպուտներ: Նրանց ձեռքով զոհվեց 31 մարդ: Նրանց թվում՝ տարբեր ազգությունների մարդիկ, ծերեր և կանայք...»[3]: Ահա այսպիսի ընդհանուր ձևակերպումներ՝ և ոչ մի խոսք այդ հակաիրավական գործողությունների նախապես կազմակերպված լինելու, նրանց հակահայկական ուղղվածության մասին: Սումգայիթյան իրադարձություններն այդպես էլ քաղաքական գնահատական չստացան, իսկ դրանց կազմակերպիչները պատասխանատվության չկանչվեցին: Կենտրոնի նման կեցվածքը պայմանավորված էր հայտնի քաղաքականությամբ, որի նպատակն էր անփոփոխ պահել Խորհրդային Միության ներքին և արտաքին սահմանները: Իսկ քանի որ հայերն առաջիններից էին, որ «ձեռք բարձրացրին» ԽՍՀՄ «տասնամյակների վտրձն անցած» ազգային-տարածքային բաժանման վրա, ապա նրանց պետք էր պատժել կամ լավագույն դեպքում չօգնել և չպաշտպանել: Կենտրոնն իր խաղն էր խաղում և մտադիր չէր վերակառուցել կայսրության հիմքերը:

Ինչ վերաբերում է Ռուսաստանյան ԽՖՍՀ-ին, ապա այն, ինչպես և խորհրդային միութենական մյուս հանրապետությունները, զուրկ էր ինքնուրույն դիրքորոշման և քաղաքականություն վարելու հնարավորությունից: Սա բոլոր կայսրություններին բնորոշ երևույթ է: ՌԽՖՍՀ ԳԽ նախագահության 1988թ. մարտի 22-ի նիստում ընդունված որոշման մեջ մտահոգություն էր արտահայտվում Հայկական և Ադրբեջանական ԽՍՀ-ում ստեղծված իրավիճակի կապակցությամբ ու կոչ էր արվում ԽՍՀՄ ԳԽ նախագահությանը՝ վճռական միջոցներ ձեռնարկել՝ ուղղված խորհրդային սահմանադրության պահանջների պահպանմանը, ԽՍՀ Միության և նրա բոլոր պետական և ինքնավար կազմավորումների հետագա ամրապնդմանը[4]: Ռուսաստանն իր կազմում ուներ բազմաթիվ ինքնավար կազմավո-

---

[2] Տե՛ս Սովետական Հայաստան, 27.II.1988:
[3] Известия, 6. III. 1988, տե՛ս նաև Известия, 1.III.1988.
[4] Տե՛ս նույն տեղում, 23.III. 1988: Правда, 23.III.1988.

բումներ է, բնականաբար, դեմ էր գոյություն ունեցող ազգային-տարածքային բաժանման վերանայմանը: Այստեղ խոսում էր բնազդը, ինչպես նաև կենտրոնին չհակասելու սովորությունը: Այդ սովորության համաձայն էր գործում նույնիսկ Հայաստանի կոմունիստական ղեկավարությունը: Այսպես, հանրապետական կուսակցական ակտիվի՝ 1988թ. փետրվարի 23-ին կայացած ժողովի ընդունած բանաձևում նշվում էր, որ ժողովը «հավանություն է տալիս և ի ղեկավարումն ու անշեղ կատարումն է ընդունում ԽՄԿԿ Կենտկոմի 1988թ. փետրվարի 21-ի որոշումը՝ որպես ստեղծված պայմաններում միակ ճիշտ որոշում»[5]:

Կենտրոնն ընդհանրապես խուսափում էր քաղաքական լուծումներից և քաղաքական գնահատականներից: Հենց սկզբից այն ձգտում էր Ղարաբաղյան հիմնահարցը ներկայացնել ոչ թե որպես քաղաքական, այլ իբրև սոցիալ-տնտեսական խնդիր: ԽՍՀՄ ԳԽ նախագահության 1988թ. մարտի 23-ի որոշմամբ ԽՍՀՄ նախարարների խորհրդին հանձնարարվում էր միջոցառումներ մշակել՝ ուղղված ԼՂԻՄ-ի տնտեսական և սոցիալ-մշակութային զարգացման հասունացած հարցերի լուծմանը[6]:

Այնուամենայնիվ, ԽՍՀՄ ղեկավարությունը չէր կարող երկար ժամանակ խուսափել քաղաքական քննարկումներից, քանի որ խնդիրը, անկախ ցանկություններից, քաղաքական էր: Դա հատկապես պարզ դարձավ, երբ ՀԽՍՀ նոր ղեկավարությունը ժողովրդական լայն շարժման ճնշման տակ սկսեց գործել որոշ չափով ինքնուրույն: 1988թ. հունիսի 15-ին Հայաստանի ԳԽ նստաշրջանը, ընդառաջ գնալով ԼՂԻՄ-ի մարզխորհրդի դիմումին, համաձայնություն տվեց մարզը Հայաստանին միացնելուն և այդ հարցը քննարկելու ու դրականորեն լուծելու խնդրանքով դիմեց ԽՍՀՄ ԳԽ-ին[7]: Ադրբեջանի ԳԽ-ն մերժեց ԼՂԻՄ-ի մարզխորհրդի դիմումը: Կենտրոնի խոսքը կարող էր վճռորոշ լինել: Սակայն սխալվում էին նրանք, ովքեր դեռ հույս ունեին, թե կենտրոնական ղեկավարությունը հրաժարվել է կայսերական մտածելակերպից և գործելաձևից: ԽՍՀՄ-ում կային բազմաթիվ չլուծված ազգային խնդիրներ («Ղարաբաղներ»), և խորհրդային ղեկավարությունը հասկանում էր, որ ԼՂ-ի կարգավիճակի վտվտիությունը նախադեպ կլինի ու կարող է հանգեցնել շղթայական ռեակցիայի: Իսկ դա վտանգավոր էր և անընդունելի կայսրության համար: 1988թ. հուլիսի 18-ին ԽՍՀՄ ԳԽ նախագահությունը մերժեց ԼՂԻՄ-ի մարզխորհրդի և ՀԽՍՀ ԳԽ խնդրանքը՝ մարզը Ադրբեջանի կազմից դուրս բերելու և Հայաստանին վերամիավորելու մասին[8]: Նախագահության այդ նիստում ելույթ ունեցավ նաև ՌԽՖՍՀ ԳԽ նախագահության նախագահ Վ. Օրլովը, որը հանդես եկավ հօգուտ միութենական հանրապետությունների սահմանների անխախտելիության, ինչպես նաև նշեց, որ «Հայաստանում, Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցող գործադուլները հիվանդագին են անդրադառնում երկրի այլ անկյուններում արտադրական կոլեկտիվների կենսագործունեության վրա»[9], նկատի ունենալով, բնականաբար, առաջին հերթին Ռուսաստանը: Նույն նիստում երկրի ղեկավար Մ. Գորբաչովը նկատեց, որ

---

[5] Սովետական Հայաստան,24.II.1988, տե՛ս նաև Правда, 24.III.1988.
[6] Տե՛ս Սովետական Հայաստան, 29.III.1988:
[7] Տե՛ս նույն տեղում, 16.VI.1988:
[8] Տե՛ս Правда, 20.VII.1988.
[9] Նույն տեղում:

տարածաշրջանում հայտնվել են ոչ միայն հակախորհրդային, այլև հակառուսական կարգախոսներ[10]: Կենտրոնը փորձում էր հայ ժողովրդի հակախորհրդային պայքարը վտխարինել հակառուսականով: Նպատակը պարզ էր:

Վերոշարադրյալ իրադարձությունները և որոշումները հող նախապատրաստեցին Հայաստանում և ԼՂ-ում հակառուսական տրամադրությունների տարածման համար: Դրան նպաստեց նաև 1988թ. մարտին խորհրդային բանակի կողմից Երևանի «զրավումը», ինչը շատերը գնահատում էին որպես ռուսական բանակի կողմից կատարված օկուպացիա: Հանրապետության ղեկավարությունն աշխատում էր կասեցնել նման տրամադրությունների տարածումը: ՀԽՍՀ ԳԽ հունիսի 15-ի նիստում ունեցած իր ելույթում Հայաստանի կոմկուսի կենտկոմի նոր նշանակված առաջին քարտուղար Ս. Հարությունյանը հիշեցնում էր, որ «մեր հանրապետության համար մշտապես ավանդական է եղել սիրո և՝ խորին հարգանքի զգացումը ռուս մեծ ժողովրդի հանդեպ»[11]: ԽՍՀՄ ԳԽ հուլիսի 18-ի նիստում նա առաջարկեց ԼՂԻՄ-ը ժամանակավորապես ենթարկել կենտրոնական մարմիններին կամ ՌԽՖՍՀ-ին[12]: Սակայն Հայաստանի հետ ԼՂ-ի վերամիավորման հողի վրա առաջացած ժողովրդական լայն շարժման ղեկավարները («Ղարաբաղ» կոմիտե) այլ կերպ էին գնահատում իրավիճակը, այլ նպատակներ հետապնդում և այլ գաղափարներ քարոզում: Նրանք դեմ չէին նույնիսկ հակառուսական հիստերիայի ծավալմանը: Ժողովուրդը, որ տասնամյակներ շարունակ քաղաքականությամբ չէր զբաղվել, դեռ շատ բան չէր հասկանում և գնում էր նրանց ետևից: Չէր հասկանում, որ քաղաքականության մեջ ամեն մեկն իր քաղաքական շահն ունի և դրան է հետևում, որ քաղաքական պայքարում իշխանության հարցը ամենևին էլ երկրորդական դիրքերում չէ:

Բավականին բարդ իրավիճակ էր Հայաստանում, երբ 1988թ. դեկտեմբերի 7-ին հայ ժողովրդի գլխին պայթեց ծանր աղետը՝ Սպիտակի երկրաշարժը: Դա մի հարված էր, որն է՛լ ավելի ծանրացրեց հանրապետության վիճակը: Ռուսաստանը, ռուս ժողովուրդը առաջիններից մեկն էր, որ անշահախնդիր օգնություն ցուցաբերեց աղետյալներին: Հայ ժողովուրդը չի կարող մոռանալ այդ օգնությունը, չի կարող ուրանալ խորհրդային «օկուպացիոն» բանակի զինծառայողների կատարած հսկայական աշխատանքն աղետի գոտում: Ինչպես 1988թ. դեկտեմբերի 19-ին մամուլի ասուլիսում նշեց ԽՍՀՄ կառավարության ղեկավար Ն. Ռիժկովը, աղետի գոտում սկզբնական շրջանում աշխատում էր զինվորական ստորաբաժանումների 20 հազարից ավելի և քաղաքացիական պաշտպանության 10 հազար զինվոր ու սպա[13]: 1988թ. դեկտեմբերի 17-ի հեռուստաելույթում Ս. Հարությունյանը նշեց. «Չեմ կարող երախտագիտության սրտալի խոսքեր չհասցեագրել զինծառայողներին: Փրկարար աշխատանքներին ամենաակտիվ մասնակցությունն են բերում սովետական բանակի և ներքին զորքերի հազարավոր ռազմիկներ, զինվորական բժիշկների բրիգադներ, մեծ

---

[10] Տե՛ս նույն տեղում:
[11] Սովետական Հայաստան, 16.VI.1988:
[12] Տե՛ս Правда, 20.VII.1988.
[13] Տե՛ս Սովետական Հայաստան, 22.XII.1988:

քանակությամբ ռազմական տեխնիկա»[14]: Հիշատակի արժանի են Ստավրոպոլի հրշեջ խմբերի աշխատակիցների անձնազոհ գործողությունները, որոնք առաջինն էին հայտնվել Լենինականում[15]: Պետք է նշել նաև այն հոգատար վերաբերմունքը, որ ցուցաբերվում էր անօթևան մնացած հայ ընտանիքների նկատմամբ: ԽՍՀՄ տարածքում և հատկապես Ռուսաստանում գտնվող տասնյակ հանգստյան տներ, պանսիոնատ-պրոֆիլակտորիումներ սիրով իրենց դռները բացել էին Հայաստանից եկած հազարավոր երեխաների, ամբողջ ընտանիքների առաջ[16]: Աղետյալ հայ ժողովրդին ցուցաբերված օգնությունը նախ և առաջ բարոյահոգեբանական քայլ էր, ուստի սխալ է նրա մասին դատել միայն տնտեսական ցուցանիշներով կամ թվերով: Այն անգնահատելի է և անուրանալի:

Թվում էր, թե ծանր աղետը կմեղմացնի լարվածությունը տարածաշրջանում և կենտրոնի հետ հարաբերություններում: Սակայն դա տեղի չունեցավ: Երկրաշարժից հետո Հայաստանում բազմաթիվ լուրեր էին պտտվում: Ինչպես միշտ՝ նման դեպքերում դրանց իսկությունը և աղբյուրը պարզել գրեթե հնարավոր չէր: Տարածվում էին լուրեր, թե կատարվածը երկրաշարժ չէր, այլ Մոսկվայի կողմից կազմակերպված արհեստական ստորգետնյա միջուկային ցնցում, որը կրկնվելու է ավելի մեծ ուժով: Ասում էին, թե ուզում են Հայաստանից հանել աղետից տուժած երեխաներին, նրանց կտրել ժողովրդից, դաստիարակել՝ զրկելով իրենց արմատներից, և որ դա հայ ժողովրդին Սիբիրում վերաբնակեցնելու ծրագրի մի մասն է: Այս և նման լուրերը իրենց ելույթներում, մամուլի ասուլիսներում հերքում և դատապարտում էին Մ. Գորբաչովը, Ն. Ռիժկովը[17]: Սակայն լուրերը շատ արագ տարածվում էին, ինչը անհետևանք չէր կարող մնալ: Ընդհարումներ էին հրահրվում պարեկային ծառայության մեջ գտնվող խորհրդային բանակի զինծառայողների հետ, որոնց հետևանքով եղան տուժածներ: Եվ դա այն ժամանակ, երբ մարդիկ այնքան հարկավոր էին ինքնաթիռների բեռնաթափման, վիրավորներին խնամելու, միմյանց կորցրած հարազատների մասին լրատվությունը կարգավորելու և բազմաթիվ այլ գործերի համար: Նշված գործողությունները, տարածվող լուրերը անմիջապես կապված էին ժողովրդական շարժումը ղեկավարող «Ղարաբաղ» կոմիտեի գործունեության հետ: Ինչպես իր՝ «Արդյո՞ք քարեր հավաքելու ժամանակն է», հոդվածում վկայում է Ս. Պետրոսյանը, դեռևս 1988թ. սեպտեմբերյան միտինգներից մեկում «Ղարաբաղ» կոմիտեի անդամ Լ. Տեր-Պետրոսյանը հայտարարել էր. «Դուք պետք է գիտակցեք, որ Հայաստանն օկուպացված է: Այն բանակը, որ կանգնած է Երևանում և Հայաստանի ուրիշ վայրերում, մեր բանակը չէ: Դա հակառակորդի բանակ է»[18]: Նույն ոգով «Ղարաբաղ» կոմիտեն շարունակում էր գործել նաև երկրաշարժից հետո: Նման պայմաններում խոսք չէր կարող լինել տարածաշրջանում և կենտրոնի հետ հարաբերություններում լարվածության մեղմացման մասին: Մանավանդ որ կոմունիստական իշխանությունից հիասթափված ժողովուրդը գնում էր կոմիտեի հետևից, որն այն ժամանակ հեղինակազրկված կոմկուսի միակ այլ-

[14] Նույն տեղում, 18.XII.1988:
[15] Տե՛ս Коммунист, 15.II.1989.
[16] Տե՛ս Սովետական Հայաստան, 8.I.1989:
[17] Տե՛ս Коммунист, 13.XII.1988, Комсомольская правда, 14.XII.1988.
[18] Սովետական Հայաստան, 28.XII.1988:

ընտրանքն էր:

Այն ժամանակ էլ կային մարդիկ, որոնք փորձում էին հետ պահել ժողովրդին այդ ճանապարհից: Արդեն հիշատակված 1988թ. դեկտեմբերի 17-ի հեռուստաելույթում Ս. Հարությունյանը նշում էր. «Հարկավոր է ուղիղ նայել ճշմարտության աչքերին: Այդպիսի անձանց գործունեության հիմքում ընկած են քաղաքական արկածախնդրությունը, նախաձեռնությունը խլելու, բարձրագոչ ճամարտակություններով սին հեղինակություն ձեռք բերելու ձգտումը: Ժողովրդի բոլոր սրբազան զգացմունքները, լինեն դրանք Լեռնային Ղարաբաղի պրոբլեմները, թե հոգատարությունը տարերքից տուժած երեխաների նկատմամբ, այդ ուժերի համար ոչինչ չարժեն, քան մանրադրամը՝ մեծ քաղաքականության իրենց խաղերում... Մենք բնավ էլ Լեռնային Ղարաբաղի պրոբլեմը չենք նույնացնում «Ղարաբաղ» կոմիտեի հետ: Մենք պարզորոշ տեսնում ենք, որ Ղարաբաղի հարցի արդարացի լուծման պահանջների քողի ներքո կոմիտեականները բացահայտ պայքար են մղում իշխանության համար... Նրանց շարժիչ ուժը ոչ թե ողբն է զոհվածների համար, ոչ թե խղճմտանքը տուժածների համար, այլ ամեն գնով տեսադաշտում մնալու, քաղաքական կարիերա անելու ձգտումը: Իրենց եսասիրական նպատակներին հասնելու համար նրանք չեն խորշում մարդկանց ազգային զգացմունքների հետ բացահայտորեն խաղալուց, ռեալ դժվարությունները չարարկելուց»[19]: Ժամանակը ցույց տվեց, որ այս խոսքերի հեղինակը հեռու չէր ճշմարտությունից: Նմանատիպ մտքեր էին արտահայտվում նաև արդեն հիշատակված Ս. Պետրոսյանի հոդվածում:[20]

Սակայն ժողովուրդը, հիասթափված կոմկուսից և, հատկապես, նրա իշխանության վերջին շրջանից, երբ ակնհայտ դարձան և հսկայական չափերի հասան կաշառակերությունը, հովանավորչությունը, սոցիալական անարդարությունը, բազմաթիվ չլուծված խնդիրները, գնում էր առատ խոստումներ տվող, գեղեցիկ խոսող, հասարակությանը դեռ անծանոթ «Ղարաբաղ» կոմիտեի հետևից: Նրա անդամների ձերբակալությունը (1988թ. դեկտեմբեր-1989թ. հունվար) մեծ դժգոհություն առաջացրեց ժողովրդի մեջ և չնպաստեց հանրապետության քաղաքական մթնոլորտի առողջացմանը:

Տարածաշրջանում և հայ-ռուսական հարաբերություններում մթնոլորտի շիկացման գործում իրենց մշտական դերն էին խաղում կենտրոնական մամուլը և հեռուստատեսությունը, որոնք խեղաթյուրում էին իրականությունը և երկրի բնակչությանը իրադարձությունները ներկայացնում մոսկովյան իշխանություններին հարմար ձևով: Սակայն կային նաև այնպիսի լրագրողներ և լրատվամիջոցներ, որոնք ազնվորեն կատարում էին իրենց պարտականությունները:[21] Խնդիրը բավականին օբյեկտիվ էր ներկայացնում Վ. Շեյնիսը, որը գրում էր. «Իմ կարծիքով, ազգի ինքնորոշման իրավունքը ըստ էության վեր է, ավելի կարևոր է պետական ինքնուրույնությունից... Ոչ թե հույզեր, ոչ թե սահմանների կամայական վերաձևում, այլ ապավինում բանականությանը, ասում են մեզ, պահանջվում են այսօր: Սակայն բանականությունը չի կարող հաշվի չառնել հույզերը, իսկ դարաբաղյան վեճում ժողովրդի վիրավորված ու վրդովված ազգային զգացումը պատմական ծանր ճակատագրի հետ մեկտեղ բախվեց տարածքային ամ-

[19] Նույն տեղում, 18.XII.1988:
[20] Տե՛ս նույն տեղում, 28.XII.1988:
[21] Տե՛ս Аврора, 1988, N 10, Семья, 1988, N 43.

բիցիայի ու հեղինակության սխալ ըմբռնված դատողություններին: Ես խորապես հավատում եմ, որ աղրբեջանական ժողովուրդը կարող է գիտակցել, թե որքան անհավասար են այդ արժեքները և, որ ավելի լավ է բարեկամ ունենալ իր տան մոտ, քան նրա մեջ բռնի ուժով պահել մի այլ ժողովրդի»[22]:

Ցավոք, նման անկողմնակալ հոդվածներ քիչ էին հանդիպում խորհրդային մամուլում: Լրատվական դաշտում վճռորոշ դեր էին խաղում կենտրոնական իշխանությունների հսկողության տակ գտնվող լրատվամիջոցները, որոնց մոտեցումը խնդրին միակողմանի էր:

Այնուամենայնիվ, կենտրոնը 1989թ. սկզբին կատարեց ոչ ստանդարտ քայլ: ԽՍՀՄ ԳԽ-ի նախագահության 1989թ. հունվարի 12-ի որոշմամբ դադարեցվեց ԼՂԻՄ-ի մարզխորհրդի և մարզկոմի գործունեությունը, ինչը ԽՍՀՄ սահմանադրության և ԽՍԿԿ կանոնադրության կոպիտ խախտում էր: Մարզում ստեղծվեց Հատուկ կառավարման կոմիտե (ՀԿԿ)[23]:

ԼՂԻՄ-ում ՀԿԿ-ի ստեղծումը հայերիս կողմից ընդհանուր առմամբ ընկալվեց որպես ռեալ իրադրությամբ թելադրված փոխզիջում, որը հիմք էր դառնում ԼՂ-ում կուտակված հարցերի լուծման համար: Համենայն դեպս, հատուկ կառավարում սահմանելուց հետո մարզի շուրջ առաջացած լարվածությունը որոշ չափով ընկավ: Մարդկանց մեջ հավատ և վստահություն առաջացավ, որ կոմիտեի ջանքերով կհաջողվի հասնել ԼՂԻՄ-ի տնտեսական ինքնուրույնությանը, մարզի վարչական և իրավապահ մարմինների ենթարկմանը կենտրոնին, ՀԽՍՀ-ի հետ մշակութային, գիտական կապերի հաստատմանը և ամրապնդմանը: Սա, անտարակույս, կնշանակեր որոշակի առաջխաղացում՝ ԼՂԻՄ-ի խնդրի լուծման ուղղությամբ: Սակայն, ԼՂԻՄ ՀԿԿ-ին չհաջողվեց հասնել այն պատասխանատու գործառնություններին, որ իրեն էին վերապահված: Ինչպես 1989թ. մայիսին իր հարցազրույցներից մեկում նշում էր ԼՂԻՄ-ի Մարտունու շրջկոմի I քարտուղար, ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ Վ. Գրիգորյանը, նախորդ տասնամյակներում կատարված բոլոր սխալներն ու բացթողումները ինքնցիայով շարունակվում էին: Ընդ որում, կոմիտեն մարզի թե՛ քաղաքական, թե՛ սոցիալ-տնտեսական զարգացմանն առնչվող հարցերը համաձայնեցնում էր Աղրբեջանական ԽՍՀ ղեկավարության հետ, մի բան, որի անհրաժեշտության մասին խոսք չկար ԽՍՀՄ ԳԽ-ի նախագահության 1989թ. հունվարի 12-ի որոշման մեջ[24]:

Այստեղ բանն ամենևին էլ այն չէր, որ կոմիտեի անդամները չցանկացան կամ ի վիճակի չեղան աշխատել բարդ պայմաններում: Խնդիրն այն էր, որ ՀԿԿ-ի ստեղծումը ամրապնդված չէր նրա գործունեության համար անհրաժեշտ մեխանիզմներով: Կոմիտեն լիովին չդարձավ կենտրոնական կամ, ինչպես ընդունված է ասել շատ երկրներում, պրեզիդենտական կառավարման նոր ձև: Այն, ցավոք, ժառանգեց մարզային ինքնավարության իրավական անկատարությունները:

Այսպիսով, ՀԿԿ-ի ստեղծումը ԼՂԻՄ-ը կենտրոնին ենթարկելու մի վտրձ էր, ինչը կարող էր իրական փոխզիջում հանդիսանալ հարցի լուծման

---

[22] XX век и мир, 1988, N 10, с. 16.
[23] Տե՛ս Известия, 15.I.1989.
[24] Տե՛ս Երեկոյան Երևան, 20.V.1989:

ճանապարհին: Սակայն այն հաջողություն չունեցավ: Լինելով ԼՂԻՄ-ում կենտրոնական իշխանությունների ներկայացուցիչը՝ ՀԿԿ-ն չէր կարող կայունացնել և կարգավորել իրադրությունը, քանի դեռ կենտրոնը չէր հրաժարվել կայսերապաշտությունից: Իսկ ժամանակը չէր սպասում: Լարվածության որոշ անկումից հետո իրավիճակը տարածաշրջանում կրկին սրվեց, քանի որ կենտրոնական իշխանությունների որոշումները լուծում չէին տալիս հասունացած հարցերին:

ԼՂ-ում հիմնահարցի շուրջ լարվածությունը մի քանի ամսում այնքան աճեց, որ Արցախի հայությունը արտակարգ քայլի դիմեց: Օգոստոսի 16-ին Մտեփանակերտում տեղի ունեցավ ԼՂ-ի բնակչության լիազոր ներկայացուցիչների համագումար, որն ընտրեց Ազգային խորհուրդ:[25] Մա կարևոր, միաժամանակ նաև հարկադիր քայլ էր, որի նպատակն էր ներկայացուցչական մարմիններից ապօրինի զրկված արցախահայությանը վերադարձնել այդպիսի մարմիններ ընտրելու և ունենալու նրա անքակտելի իրավունքը, որոնք կարտահայտեին ԼՂ-ի հայության միասնական կամքը:

ԼՂ-ի Ազգային խորհուրդը, որ ընտրված էր արցախահայության կողմից, արտահայտում էր վերջինիս կամքը և կարող էր նպաստել հակամարտության կարգավորմանը: Ի տարբերություն ՀԿԿ-ի, Ազգային խորհուրդը իրական ազդեցություն ուներ հակամարտող կողմերից մեկի՝ Արցախի հայության վրա, ինչպես նաև բանակցություններում նրան ներկայացնելու օրինական (լեգիտիմ) իրավունք և լիազորություններ: Ու թեև Ազգային խորհուրդը և նրա նախագահությունն ընդունում էին ԽՄԿԿ ծրագիրն ու կանոնադրությունը, ԽՄՀՄ սահմանադրությունն ու օրենքները և հայտարարել էին, որ գործելու են դրանց շրջանակներում, այնուամենայնիվ, արցախահայության ընտրած ներկայացուցչական նոր մարմինները չճանաչվեցին ԽՄՀՄ իշխանությունների կողմից: ԼՂ-ի բնակչության լիազոր-ներկայացուցիչների համագումարը և Ազգային խորհրդի ընտրությունը ԽՄՀՄ պատմության մեջ նախադեպը չունեցող բացառիկ իրադարձություններ էին: Մոսկվան պատրաստ չէր գործ ունենալ իրականում ժողովրդի ընտրած մարմինների հետ, մանավանդ որ երևույթը կարող էր վարակիչ լինել և վտանգել կայսրության հիմքերը: Կենտրոնական իշխանությունները ԼՂ-ի համագումարը, Ազգային խորհուրդը հայտարարեցին օրենքից դուրս, ցրման ենթակա և բոլոր միջոցները ձեռք ստան դրան հասնելու համար: Միաժամանակ ուժեղացավ կենտրոնի ընդհանուր ճնշումը Հայաստանի և Արցախի վրա: Անհնազանդ, կայսրության հիմքերը անընդհատ վտանգող հայերին պատժելու համար շատ հարմար էր օգտագործել տարածաշրջանում տեղակայված պարետային զորքերը: Թեև ԼՂ-ի բնակչության լիազոր-ներկայացուցիչների համագումարը ժամանակին դիմել էր պարետային զորքերի հրամանատարությանը՝ հանուն տարածաշրջանում խաղաղության շուտափույթ հաստատման համագործակցելու առաջարկով, սակայն բանակային ստորաբաժանումների անգործության, հաճախ էլ նույնիսկ աջակցության պայմաններում բազմաթիվ մեծ ու փոքր հանցագործություններ էին կատարվում Ղարաբաղի հայ ազգաբնակչության դեմ:

Այս պայմաններում բնական էր և՛ Հայաստանում, և՛ Արցախում հակաբանակային ու հակառուսական տրամադրությունների աճը: Թեպետ պարետային զորքերում տարբեր ազգությունների ներկայացուցիչներ էին

[25] Տես Խորհրդային Ղարաբաղ, 17 և 19.VIII.1989:

ծառայում, բայց ամբողջ աշխարհում և Խորհրդային Միությունում խորհրդային բանակը միշտ էլ ընկալվել է որպես ռուսական: Մյուս կողմից, այս ժամանակահատվածում միութենական և ռուսական մամուլում շատ հաճախ էին զուգահեռներ անցկացվում Լեռնային Ղարաբաղի ու Աֆղանստանի միջև, և հարց էր առաջանում՝ ինչո՞վ են մեղավոր իրենց զինվորական պարտքը կատարող երիտասարդները, որոնք բազմաթիվ զրկանքներ են կրում և միաժամանակ արժանանում տեղի բնակչության ատելությանը:[26] Այս հարցադրումը այնքանով էր ճիշտ, որ զինվորը, որպես անհատ, մեղավոր չէր ստացած հրամանը կատարելու համար: Սակայն զինվորը և բանակն ամբողջությամբ, լինելով կենտրոնական իշխանությունների գործիք, մեղսակից էին դառնում այդ իշխանությունների կողմից կատարվող հանցագործություններին: Ուստի միանգամայն հասկանալի է այդ ժամանակահատվածում հակաբանակային և հակառուսական տրամադրությունների տարածումը հայության մեջ:

Պետք է նշել նաև, որ զինվորներից շատերը, եթե չասենք մեծամասնությունը, տեղյակ չէին, թե ի՞նչ է կատարվում Լեռնային Ղարաբաղում, ո՞րն է հակամարտության բուն պատճառը, ո՞ւմ է պետք պաշտպանել և այլն: Զինվորների, ինչպես նաև երկրի բնակչության անտեղյակությունը անմիջականորեն կապված էր լրատվամիջոցների, հատկապես կենտրոնական հեռուստատեսության, մեղմ ասած, թերի աշխատանքի հետ: Կենտրոնական լրատվամիջոցները դարաբաղյան հակամարտության հետ կապված տեղեկությունները հաղորդում էին խիստ չափաքանակով, տողերի, եթերի րոպեների, հակամարտող կողմերի պատասխանատվության բարոյազուրկ հավասարության սկզբունքով: Իսկ կենտրոնական հեռուստատեսությունը, որի հասարակական ազդեցությունն ավելի մեծ էր, հաճախ խախտում էր նույնիսկ այդ սկզբունքը:[27]

Կենտրոնական հեռուստատեսության և ընդհանրապես լրատվամիջոցների աշխատանքում հաճախակի հանդիպող «թերացումները» չէին կարող բացասաբար չանդրադառնալ հայ-ռուսական հարաբերությունների վրա:

Ինչպես տեսանք, կենտրոնական իշխանությունների վարած անզիջում քաղաքականությունը հող էր պատրաստում Հայաստանում և ԼՂ-ում հակասոցիալիստական, հակամիութենական տրամադրությունների տարածման համար: Դրանք նոր թափով ծավալվեցին 1989թ. ապրիլ-մայիս ամիսներից, երբ ազատ արձակվեցին «Ղարաբաղ» կոմիտեի անդամները: Վերադառնալով Հայաստան՝ կոմիտեականները ընդլայնեցին իրենց գործունեության շրջանակները: Եթե մինչև երկրաշարժը և ձերբակալությունը նրանց գործունեությունը օբյեկտիվորեն նպաստում էր դարաբաղյան պահանջատիրության, հանրապետության առջև ծառացած առանձին խնդիրների արծարծմանը, ապա այժմ կոմիտեի որոշ անդամներ ամեն գնով ձգտում էին իշխանության: Այնպիսի տպավորություն էր, որ նրանք գործում են «որքան վատ՝ այնքան լավ» սկզբունքով: «Ղարաբաղ» կոմիտեի նախաձեռնությամբ ստեղծվեց հասարակական նոր կազմակերպություն՝ «Հայոց համազգային շարժում» (ՀՀՇ), որի հիմնադիր համագումարը տեղի ունեցավ 1989թ. նոյեմբերին: ՀՀՇ ծրագրում գրված էր. «Մենք

[26] Տե՛ս Комсомольская правда, 27.IX. 1989.
[27] Տե՛ս Коммунист, 3.X.1989.

մերժում ենք անբարոյական և մեր ազգի համար անպստուղ այն քաղաքականությունը, որը մի կողմից իբրև «դիվանագիտություն» ենթադրում է հավատարմության անտեղի հավաստիացումներ այլ ժողովրդի նկատմամբ, մյուս կողմից՝ պահանջում է թշնամություն քարոզել ուրիշ ժողովուրդների կամ կրոնների դեմ»[28]: Փաստորեն դա նշանակում էր հայ քաղաքական մտքի մեջ շուրջ երեք դար իշխող ռուսական կողմնորոշման վերանայում, ինչպես նաև Թուրքիայի հետ նոր, պատմական անցյալը անտեսող հարաբերություններ հաստատելու ցանկություն: Այդ ժամանակ ժողովրդի մեծ մասը դեռ շարունակում էր գնալ կոմունիստական կուսակցությանն ընդդիմադիր միակ ուժի՝ ՀՀԾ-ի հետևից:

Իսկ Մոսկվայում կարծես չէին էլ նկատում վերոհիշյալ տրամադրությունների աճը Հայաստանում և ԼՂԻՄ-ում: 1989թ. նոյեմբերի 28-ին ԽՍՀՄ ԳԽ-ն «ԼՂԻՄ-ում իրադրությունը նորմալացնող միջոցառումների մասին» որոշում ընդունեց:[29] Այդ որոշմամբ վերացվեց ՀԿԿ-ն և ստեղծվեց հանրապետական կազմկոմիտե, որը կառավարելու էր մարզը: Կազմկոմիտեն պետք է ձևավորվեր կողմերի՝ հայերի և ադրբեջանցիների հավասար ներկայացուցչության սկզբունքով, որը խախտվեց Ադրբեջանի իշխանությունների կողմից: Թղթի վրա մնաց նաև որոշման այն կետը, որը նախատեսում էր վերականգնել ԼՂԻՄ-ի ժողովրդական պատգամավորների խորհրդի և նրա գործադիր կոմիտեի գործունեությունը: Հայկական կողմը, չունենալով հավասար ներկայացուցչություն, հրաժարվեց մասնակցել կազմկոմիտեի աշխատանքներին: Նույն որոշմամբ ԽՍՀՄ ԳԽ-ին կից ստեղծվեց ԼՂԻՄ-ի Վերահսկիչ-դիստրդական հանձնաժողով, որն ուներ ավելի պակաս իրավունքներ և լիազորություններ, քան ՀԿԿ-ն: Այսպիսով՝ ՀԿԿ-ի գործունեությունը,որպես ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա հարցի լուծման փուլ, ամրապնդվելու փոխարեն դադարեցվեց և ստեղծվեց մի մարմին, որը միայն ժամանակավորապես կարող էր իրականացնել վերահսկիչ-դիստրդական գործառնություններ, այն պայմաններում, երբ նախատեսվում էր իրական իշխանությունը նորից վերադարձնել Ադրբեջանական ԽՍՀ-ին: Սա քայլ էր դեպի տարածքային անձեռնմխելիության, սահմանների անվտանգության սկզբունքներ, դեպի կայսրության ներքին սահմանների պահպանում և ամրապնդում:

Հայաստանի ԳԽ-ն և ԼՂ-ի Ազգային խորհուրդը ԽՍՀՄ ԳԽ-ի 1989թ. նոյեմբերի 28-ի որոշումը գնահատեցին որպես ԼՂ-ի կրկնվող բռնի վերադարձ Ադրբեջանի իշխանության տակ և չեղյալ հայտարարեցին այն:[30]

Սկսվեց այսպես կոչված օրենքների և որոշումների պատերազմը, երբ միութենական և հանրապետական մարմիններն ընդունում էին միմյանց հակասող և չեղյալ հայտարարող օրենքներ և որոշումներ: Դա ավելի էր խորացնում խառնաշփոթը և ճգնաժամը, որն արդեն տարածվել էր ամբողջ Խորհրդային կայսրությունում:

Այլևս հույսեր չկապելով կենտրոնական իշխանությունների կողմից դարաբաղյան հարցին արդար լուծում տալու հետ՝ ՀԽՍՀ ԳԽ-ն և ԼՂ-ի Ազգային խորհուրդը 1989թ. դեկտեմբերի 1-ին ընդունեցին պատմական որոշում. հռչակեցին Հայաստանի և Լեռնային Դարաբաղի վերամիավորու-

[28] Հայք, 1989, N1:
[29] Տե՛ս Известия, 30.XI.1989.
[30] Տե՛ս Коммунист, 3.XII.1989.

մը:[31] Այս՝ հիրավի պատմական որոշումը վճռական և պատասխանատու քայլ էր, որն օրինաչափ էր կենտրոնի վարած անարդյունաբեր և անհեռատես քաղաքականության պայմաններում: Միութենական իշխանությունների՝ խնդիրը կարգավորելու կամքի և կարողության բացակայությունը անխուսափելիորեն հանգեցնելու էր այն մտքին, որ կենտրոնն ավելորդ օղակ է: Դրան, բնականաբար, հետևելու էին հակամարտող կողմերի ինքնուրույն և վճռական քայլերը:

Ադրբեջանական ԽՍՀ ԳԽ-ի նախագահությունը իր հերթին, 1989թ. դեկտեմբերի 4-ին, ընդունեց որոշում, որով կասեցվում էր ԽՍՀՄ ԳԽ 1989թ. նոյեմբերի 28-ի որոշման մի շարք կանոնների գործողությունը: Ճիշտ է, միութենական ԳԽ-ի նախագահությունը 1990թ. հունվարի 10-ի իր որոշմամբ երկու կողմերի որոշումներն էլ չեղյալ հայտարարեց և առաջարկեց հանրապետություններին՝ իրենց օրենսդրական ակտերը համապատասխանեցնել ԽՍՀՄ սահմանադրությանը[32], սակայն կենտրոնական մարմինների քանի՞-քանի՞ որոշումներ էին մնացել թղթի վրա...

Հայտնի ճշմարտություն է, որ անպատժելիությունը ծնում է նոր հանցագործություններ: Հիշենք 1988թ.՝ Սումգայիթ, Կիրովաբադ, Բաքու, շրջափակում: Մրանցից և ոչ մեկի գլխավոր մեղավորները պատիժ չկրեցին, ոչ մեկին քաղաքական գնահատական չտրվեց: Օգտվելով անպատժելիությունից՝ Ադրբեջանի ժողովրդական ճակատ (ԱԺՃ) կոչված կազմակերպությունը, հանրապետության իշխանությունների հետ միասին 1990թ. հունվարին Բաքվում ձեռնարկեց հայերի նոր ցեղասպանություն: Հենց այդպես էր որակավորում Ադրբեջանի մայրաքաղաքում հունվարի 13-20-ը տեղի ունեցածը «Խորհրդային Հայաստան» օրաթերթի հունվարի 16-ի խմբագրականը, թեև տուժածների մեջ կային նաև ռուսներ և այլազգիներ: Հայկական մամուլում տպագրվում էին հոդվածներ, որոնք զուգահեռներ էին անցկացնում 1915թ. հետ, մեղադրում մոսկովյան իշխանություններին դարասկզբի սխալները կրկնելու մեջ և կոչ անում հայությանը լինել միասնական, չապավինել օտարի ողորմածությանը:[33]

Բաքվի ցեղասպանությունը և դրա հետ կապված կենտրոնական իշխանությունների վարքագիծը անգնահատելի նվեր էին հայ-ռուսական բարեկամության և դաշինքի թշնամիներին: Հայը նորից իրեն միայնակ էր զգում ու անպաշտպան: Բանաստեղծ Վ. Դավթյանը այդ օրերին գրում էր. «...Եվ թվում է նորից 1915-ն է, թվում է նորից չունես ոչ մի պաշտպան և քո արդարացի ձայնը չի խառնվում խիղճն այն երկրի, որի նվիրյալը, մշակը, զինվորն ես եղել 70 տարի...»[34]: Մի քիչ ուշ՝ հայ մամուլում կարելի էր հանդիպել նաև ավելի սթափ գնահատականների: Հրապարակախոս Վ. Պետրոսյանը, ստեղծված իրավիճակի քննության փորձ կատարելով, գրում էր. «Հակատրամաբանական չէր և սպասելի էր, որ Լեռնային Դարաբաղի-Արցախի հարցում Ադրբեջանի վարքագիծը կենտրոնի համար պիտի շատ ավելի նախընտրելի լիներ: Չնայած իր բուռն հավաստիացումներին, կենտրոնը պատրաստ չէ (կամ դեռ պատրաստ չէ) լիովին հրաժարվելու «ազգային հարցի լուծման» առալինյան մոդելից և իսկական ֆեդերացիայի

---

[31] Տե՛ս նույն տեղում:
[32] Տե՛ս Խորհրդային Հայաստան, 13.1.1990.
[33] Տե՛ս նույն տեղում, 16-18.I.1990, Դրոշակ, 17.1.1990:
[34] Խորհրդային Հայաստան, 16.1.1990:

ստեղծման շռայլ խոստումներ տալով, առայժմ ավելի գնում է հնացած մեխանիզմի մեջ ոչ էական բարեփոխություններ անելու ճանապարհով: Եվ, ուրեմն, Ադրբեջանի դիրքը՝ պահպանել Արցախի «փաստական վիճակը» (status quo) օբյեկտիվորեն զուգադիպում էր կենտրոնի այսօրվա տակտիկային»[35]: Որոշ մարդիկ էլ հիշեցնում էին մեծ բանաստեղծ Հ. Թումանյանի խոսքերը, որ գոյություն ունի երկու Ռուսաստան, մեկը չինովնիկների Ռուսաստանն է, որ մարդիկ է ուղարկում մեզ մոտ՝ գողեր, ավազակներ, հեղափոխականներ գտնելու համար, դա ուրիշ է, մի Ռուսաստան էլ կա, որ մեզ մոտ մարդիկ է ուղարկում մեր հոգևոր գանձերը ուսումնասիրելու և համայն մարդկության սեփականությունը դարձնելու համար:[36] Այստեղ չես կարող չնշել Ա. Սախարովի, Մ. Դուդինի, Ա. Նույկինի, Գ. Ստարովոյտովայի և էլի շատ-շատերի անունները, չես կարող չշեշտել, որ այդ նույն կենտրոնական իշխանությունների անհեռատես քաղաքականության, անգործունեության պատճառով Բաքվում զոհվեցին շատ ռուսներ և այլ ազգերի ներկայացուցիչներ:

Բայց նույնիսկ Բաքվի ողբերգությունը շտկումներ չմտցրեց կենտրոնի քաղաքականության մեջ: Եվ չէր էլ կարող մտցնել, քանի որ գործում էր կայսրության ինքնապահպանման բնազդը: Բաքուն հայաթափելուց հետո ադրբեջանական խուժանը ԱԺԵ-ի և իշխանությունների ղեկավարությամբ անցավ Հյուսիսային Արցախի հայկական գյուղերին: Ադրբեջանական ԽՍՀ Խանլարի շրջանի Ազատ, Կամո, Մարտունաշեն ու Գետաշեն հայաբնակ գյուղերի բնակչության բռնի տեղահանմանն ուղղված գործողությունները հատկապես ակտիվացան 1990թ. փետրվարի վերջին-մարտի սկզբին, երբ այնտեղ տեղաբաշխվեցին խորհրդային բանակի և ներքին զորքերի ստորաբաժանումները: «Ուստի ակնհայտ է, - ասվում էր ՀԽՍՀ ԳԽ նախագահության 1990թ. մարտի 2-ի հայտարարության մեջ, - որ այդ գործը խրախուսվում կամ նույնիսկ ղեկավարվում է կենտրոնական իշխանությունների կողմից»[37]:

Մոսկվան անտեսում էր հայկական կողմի բոլոր դիմումներն ու բողոքները: Խորհրդային բանակի սադրիչ գործողությունները շուտով աեղավտխվեցին Հայկական ԽՍՀ տարածք: Տարածաշրջանում կարգ ու կանոն հաստատելու, անձնագրային ռեժիմ անցկացնելու պատրվակով զինվորականները, ոտնահարելով մարդկանց արժանապատվությունն ու իրավունքները, կատարում էին զանգվածային խուզարկություններ, ջարդուփշուր անում մարդկանց ունեցվածքը, գերեվարում երկրի քաղաքացիներին:[38]

Այս պայմաններում կանխատեսելի էին հայ բնակչության և Հայաստանում գտնվող խորհրդային բանակի ստորաբաժանումների միջև ընդհարումները: Այդպիսի մի քանի ընդհարում եղավ ապրիլ-մայիս ամիսներին Հայաստանի տարբեր մասերում:[39] Եվ միայն հանրապետության ղեկավարության ու զինվորական հրամանատարության ողջախոհության կոչերով հնարավոր չէր կանխել բանակի ու ժողովրդի օտարացումը և դրա հետևանք ընդհարումները: Լինելով կենտրոնական իշխանությունների վա-

---

[35] Նույն տեղում, 28.II.1990:
[36] Տե՛ս Քաղաքական զրուցակից,1990, N 4,էջ 13:
[37] Խորհրդային Հայաստան, 3.III.1990:
[38] Տե՛ս նույն տեղում, 10.IV.1990:
[39] Տե՛ս նույն տեղում, 14.IV և 20.V.1990:

ված անմարդկային և բարոյազուրկ քաղաքականության անմիջական իրականացնողը՝ խորհրդային բանակը ժողովրդական դժգոհության և ատելության թիրախն էր դառնում:

Չնայած այս ամենին՝ ուսումնասիրվող ժամանակահատվածում երկու ժողովուրդների հարաբերություններում նկատվել են նաև դրական երևույթներ: Այդպիսի իրադարձությունները հատկապես ակնհայտ էին մշակույթի բնագավառում: Դրանց թվում կարելի է նշել Մոսկվայում, նախկին Լազարյան ճեմարանի շենքում հայ մշակութային կենտրոնի ստեղծումը 1988թ. աշնանը, որի կազմի մեջ մտնում էր ռուս-հայկական բարեկամության թանգարանը[40], Մոսկվայում հայկական դրամատիկական թատրոն-ստուդիայի բացումը 1989թ. գարնանը:[41] Չի կարելի շրջանցել աղետի գոտում ռուս շինարարների կատարած աշխատանքը:[42] 1990թ. Մոսկվայում շատ տասնամյակների ընթացքում առաջին անգամ նշեցին հայերի ցեղասպանության 75-ամյակը: Այդ կապակցությամբ հրավիրված գիտագործնական կոնֆերանսի թեման էր՝ «Հայերի ցեղասպանությունը միջազգային հանցագործություն է»[43]:

Ահա այսպիսի բարդ ու հակասական զարգացումներ էին ապրում հայ-ռուսական հարաբերությունները 1988թ. փետրվար-1990թ. մայիս ընկած ժամանակահատվածում: Ռուսաստանը դադարելու էր կենտրոնի կցորդը լինելուց և դառնալու էր ինքնուրույն քաղաքական սուբյեկտ: Փոխվելու էր ուժերի հարաբերակցությունը կենտրոնի և հանրապետությունների միջև: Այս ամենը դառնալու էր հայ-ռուսական հարաբերությունների նոր փուլի սկիզբը:

АРЦАХСКОЕ ДВИЖЕНИЕ И АРМЯНО–РОССИЙСКИЕ ОТНОШЕНИЯ (1988–1990гг.)

Л. Л. УЛУБАБЯН

Резюме

Начавшаяся в 1985г. в Советском Союзе перестройка открыла новую страницу в истории советской империи и входящих в нее народов. Армянский народ, поверив в демократическую направленность перестройки, в 1988г. вновь поднял вопрос Карабаха (Арцаха). В результате в Нагорном Карабахе и Армении развернулось карабахское движение, ставившее целью воссоединение автономной области с Арменией. Карабахская проблема сразу стала краеугольным камнем армянской общественной жизни и оказала влияние на все ее сферы, в том числе и на армяно–рос–

[40] Տե՛ս Գրական թերթ, 4.XI.1988:
[41] Տե՛ս Коммунист, 11.IV.1989.
[42] Տե՛ս Խորհրդային Հայաստան, 6.IV.1990:
[43] Տե՛ս նույն տեղում, 24.IV.1990:

сийские отношения. Имперский центр в лице союзных органов, как и следовало ожидать, предпочел принцип нерушимости границ праву наций на самоопределение и всячески препятствовал решению проблемы. Это не только дискредитировало перестройку, но и бросало тень на армяно-российские дружественные отношения, насчитывающие почти три столетия. Действия Москвы и в СССР, и за его пределами воспринимались как вытекающие из российских интересов. Что касается самой РСФСР, то она тогда еще не выступала в роли самостоятельного политического субъекта и являлась придатком центра. Однако весенние парламентские выборы 1990г., в результате которых в обеих республиках к власти пришли новые политики, должны были внести изменения как в отношения между Арменией и Россией, так и в отношения между республиками и центром.